



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ
ՈՐՈՇՈՒՄ

« 13 » Տապիս

2021 թվականի N 153-Վ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ
ՆՈՅԵՄԲԵՐԻ 20-Ի ԹԻՎ 172-Ա ՈՐՈՇՄԱՆ ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հաշվեքննիչ պալատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 9-րդ մասի 3-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, ՀՀ հաշվեքննիչ պալատի 2019 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ 28/21 որոշման հավելվածի 5-րդ կետով և 22-րդ կետի 2-րդ ենթակետով, Հայաստանի Հանրապետության հաշվեքննիչ պալատը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

Հաշվեքննիչ պալատի 2020 թվականի նոյեմբերի 20-ի «Հայաստանի Հանրապետության հաշվեքննիչ պալատի 2021 թվականի գործունեության ծրագիրը հաստատելու մասին» թիվ 172-Ա որոշման հավելվածի 2-րդ գլխի 5-րդ կետի 3-րդ սյունակի «ֆինանսատնտեսական գործունեություն» բառերը փոխարինել «Հանրային ծառայությունների ոլորտի կարգավորման գործընթաց» բառերով:

ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ
ՆԱԽԱԳԱՀ

Լ. ՅՈԼՅԱՆ